ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզ գ. Արևաշող 1 Փ. 105, Հեռ. 0255-2-21-76

N ԼՄԱՀ 0202
14 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33 - րդ հոդվածի 4 -րդ կետի 9) - րդ ենթակետով կից Ձեզ եմ ներակայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 40, 41 որոշումները:

Առդիր՝ 2 էլ. նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Սեվադա Սահակյան
0255-2-21-76

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Հոկտեմբերի 2019թ. № 40

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, Արևաշող համայնքի ավագանու 2017թ. Մայիսի 29 – ի «ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմամբ, և հիմք ընդունելով Արևաշող համայնքի բնակիչների դիմումները ինչպես նաև համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1 – ի թիվ 10 եզրակացությունը `

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Արևաշող համայնքի բյուջեի 4726 «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» հոդվածից Արևաշող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հարազատի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին 25000 (քսանհինգ հազար) ական ՀՀ դրամ՝

1) Գայանե Ալբերտի Հովսեփյանին՝ սկեսրայրի հուղարկավորության ծախսերի համար
2) Տաթևիկ Ֆելիքսի Գրիգորյանին՝ սկեսուրի հուղարկավորության ծախսերի համար
3) Գառնիկ Եղիշի Մուրադյանին՝ հոր հուղարկավորության ծախսերի համար
4) Հասմիկ Սուրիկի Թադևոսյանին՝ սկեսրոջ հուղարկավորության համար

2. Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Պ. ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Հոկտեմբերի 2019թ. № 41

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐԵՎԱՇՈՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» - Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով, 38–րդ հոդվածի 7–րդ կետով և հիմք ընդունելով «Արևաշողի երիտասարդական կենտրոն» ստեղծելու նախաձեռնող խմբի անդամ՝ Արևաշող համայնքի բնակիչ Լուսինե Կարենի Հակոբջանյանի դիմումը ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Լոռու մարզի Արևաշող համայնքի «Արևաշողի երիտասարդական կենտրոն» ստեղծելու նախաձեռնող խմբի անդամ Լուսինե Կարենի Հակոբջանյանին կենտրոնի կազմավորման աշխատանքներին աջակցելու նպատակով տրամադրել դրամական աջակցություն՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ 15 օրյա ժամկետում ապահովել դրամական միջոցների տրամադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Պ. ՊԱՊԻԿՅԱՆ**